

ՏԵԿՈՐԻ ՏԱՃԱՐԻ V ԴԱՐԻ
ՀԱՅԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
և ՄԵՍՐՈՊՅԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՌԱՋԱԵՐԸ

Պրոֆ. Կ. Գ. ՂԱԼԱԴԱՐՅԱՆ

Տեկորի հնագույն տաճարը գտնվում է մեր սահմանից դուրս, Անվո ավերակներից դեպի հարավ-արևմուտք, Արջոառիճ (Ալաջա) լեռան մոտ:

Տաճարի առաջին ուսումնասիրողն ու չափագրողը եղել է ֆրանսիացի ճարտարապետ Տեռսիենը՝ 1839 թ.: Նա հատուկ ուշադրություն է դարձրել տաճարի պայտաձև կամարների վրա և նշել, որ իզուր նրանք գիտության մեջ արաբական են համարվել, քանի որ Տեկորի շինության ժամանակ արաբները դեռևս համաշխարհային մշակույթ չէին ստեղծել¹:

1858 թ. լույս տեսավ Սարգիս Զալալյանցի «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» երկհատոր աշխատության երկրորդ գիրքը, որի մեջ հրատարակվեցին Տեկորի մի քանի արձանագրությունները բազմաթիվ սխալներով²:

1864 թ. լույս տեսավ Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Ներսես Մարգսյանի գիրքը՝ Փոքր և Մեծ Հայքի տեղագրության վերաբերյալ, ուր մեջ են բերված, համեմատաբար ճիշտ վերծանությամբ, Տեկորի մի քանի արձանագրությունները՝ Սարգսյանի վերոհիշյալ գիրքը հիմք ծառայեց Մկրտիչ Էմինի 1881 թ. Մոսկվայում ռուսերեն լեզվով հրատարակած մի ուսումնասիրության, որի մեջ նա ռուսերեն թարգմանության հետ տվել է արձանագրության նաև հայերեն բնագիրը³: Նույն 1881 թ. Վենետիկում հրատարակվեց Ղևոնդ Ալիշանի Շիրակ գավառի տեղագրությանը նվիրված ընդարձակ ուսումնասիրությունը, որի մեջ ի մի են հավաքված ոչ միայն այն ամենը, ինչ տպագրվել էր մինչև այդ ժամանակ, այլև լրացուցիչ տեղեկություններ, որոնք Ալիշանն ստացել էր իր աշխատությանն օժանդակող թղթակիցներից⁴:

Տեկորի տաճարի ճարտարապետությունը 1909 թ. ուսումնասիրեց մեծանուն Թ. Թորամանյանը և արդյունքներն առանձին գրքով հրատարակեց 1911 թ.⁵: Նա հետազայում ևս բազմաթիվ անգամներ անդրադարձավ Տեկորի

¹ Texier Ch., Description de l'Arménie, la Perse et la Mesopotamie, Paris, 1842.

² «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան աշխատասիրութեամբ Սարգիս Զալալեանց», Դասն Բ, ի Տիխիս, 1858, էջ 50—52:

³ Ն. Վ. Սարգիսյան, Տեղագրութիւն ի Փոքր և ի Մեծ Հայաստան, 1864, Վենետիկ:

⁴ «Армянские надписи в Карсе, Ани и в окрестностях последнего». Перевод Н. О. Эмина, Москва, 1881.

⁵ Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881:

⁶ Թ. Թորամանյան, Պատմական հայ ճարտարապետություն, Ա, Տեկորի տաճարը, Թիֆլիս, 1911:

տաճարին լրացուցիչ ուսումնասիրություններով և հոգվածներով, որոնք հետմահու ամփոփվեցին նրա աշխատությունների երկու ստվարածավալ հատորների մեջ⁷։ Տեկորի տաճարը քննության նյութ է հանդիսացել նաև օտար դիտնականների համար, որոնց թվում առաջին հերթին հիշատակելի է Վիեննայի պրոֆեսոր Հովսեփ Ստրշիգովսկու երկհատոր ուսումնասիրությունը՝ նվիրված հայկական ճարտարապետության և նրա կապերին Եվրոպայի հետ⁸։ Տեկորն ընդարձակ չափերով և բազմակողմանիորեն ուսումնասիրվել է նաև սովետական գիտնականների և մասնավորապես հայկական ճարտարապետության պատմաբանների կողմից⁹։

Բոլոր ուսումնասիրողները, առանց բացառության, Տեկորի տաճարը համարել են V դարի հուշարձան, կամ ավելի հին ժամանակներում կառուցված հեթանոսական տաճար, որ հիմնապես վերակառուցվել է V դարում։ Այդ վերջին տեսակետը հայտնել է Թորամանյանը։ Նա գրել է, որ V դարում «Սահակ Կամսարական մը ոչ թէ ի հիմնաց նոր շիներ է այդ եկեղեցին, այլ կանխավ գոյություն ունեցող շինության մը վրա կատարեր է շատ կարևոր փոփոխություններ»¹⁰։

Տաճարի V դարին պատկանելու հատկանիշներն են՝ ա) Աստիճանավոր պատվանդանը, որի վրա կառուցված է տաճարը։ V դարից հետո կառուցված տաճարներն այդ պատվանդանը չունեն։ բ) Արտաքին սյունասրահը, որ երեք կողմից շրջափակում է տաճարը և արևելյան կողմում հենվում զույգ ավանդատների դուրս շեշտված մասերին։ V դարից հետո հայկական տաճարներն այլևս արտաքին սյունասրահ չէին ունենում։ գ) Արևելյան կողմի հարավից հյուսիս ձգված երկու ավանդատները, որոնք կիսով չափ դուրս են գալիս տաճարի քառակող մարմնից։ VI դարում ավանդատները հավասարակողմ քառանկյունիներ են դառնում, իսկ X դարում՝ արևելքից դեպի արևմուտք երկարող նեղ սենյակներ։ դ) Պայտածե կամարները, որոնք հետագայում դառնում են կիսաշրջան և ավելի ուշ՝ երկկենտրոն։ ե) Մուտքերի ոլորտավոր քանդակազարդությունները։ զ) Քառակող զմբեթը։ VII դարում կառուցում էին բազմանկյուն, իսկ ավելի ուշ՝ կլոր զմբեթներ։

Արիշանի կարծիքով Տեկորը հայոց հնագույն եկեղեցիներից մեկն է «զուցե թէ և քան զբնաւս հնագոյն»¹¹։ Թորամանյանի կարծիքով Տեկորի տաճարը նախաքրիստոնեական ժամանակներում ունեցել է եռանավ բազիլիկի կառուցվածք, երկու շարք ներքին սյուներով։ V դարում ձևափոխվել և կենտրոնակա-

7 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատ. Ա, Երևան, 1942, հատ. Բ, Երևան, 1948։

⁸ Strzygowski J., Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918.

⁹ «Всеобщая история архитектуры», т. I, М., 1958, էջ 422—423, Բ. Я. Агабян, Композиция купольных сооружений Грузии и Армении, Ереван, 1950, էջ 64, А. Л. Якобсон, Очерк истории зодчества Армении V—XVII веков, М.—Л., 1950, էջ 16—17, В. М. Арутюнян и С. А. Сафарян, Памятники армянского зодчества, Москва, 1956, էջ 36, Ալեքսանդր Սահիանյան, Կառավարության ճարտարապետությունը, Երևան, 1955, էջ 87, Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, էջ 82 և այլն։

¹⁰ Թ. Թորամանյան, Տեկորի տաճարը, էջ 12, նույնը «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», հատ. Ա, էջ 188, նաև նույն աշխատության Բ հատորը, էջ 68։

¹¹ Ղ. Արիշան, Շիրակ, էջ 131։

նորակառույց չորս մույթերի վրա ստացել է քառակող դմբեթ: Այդ դմբեթը հայկական ճարտարապետության մեջ միակ օրինակն է, պահպանված իր նախնական գրությամբ, առանց ձևափոխությունների¹²: Թ. Թորամանյանը գրում է. «Հայկական եկեղեցիներու առաջին տիպարը և հայ ճարտարապետության ինքնուրույն ոճի անխառն մարմնացումը կներկայանա այս երբեմնի վեհաշուք տաճարը...»¹³:

Տեկորի տաճարի արևմտյան մուտքի ճակատակալ քարի վրա պահպանվել է նրա կառուցման արձանագրությունը: Սա առայժմ հայերեն միակ արձանագրությունն է, որ հասել է մեզ V դարից:

Այդ տեսակետից արձանագրության մանրամասն ուսումնասիրությունը, ինչպես պատմահնադիտական, այնպես էլ հնագրական տեսակետներով, ունի առանձնահատուկ կարևորություն: Այդ է պատճառը, որ այդ արձանագրությունը հնագետների հատուկ ուշադրությունն է գրավել: Նրա զոյությունը վաղուց է հայտնի, այն առաջին անգամ հրատարակել է Սարգիս արքեպ. Ջալալյանցը 1858 թ. առանց շրջելու նրա ժամանակաշրջանն ու բովանդակությունը: Նա



Արձանագրության րեզանուր տեսքը

արձանագրությունը հրատարակել է Տեկորի ՆՍԷ (1008) թվականի մի արձանագրության հետ, իբրև նրա անմիջական շարունակությունը, որի մեջ հանդես են գալիս Անիի Բագրատունի Պապիկ թագավորի կին Կատրանիդե թագուհին և որդին, որոնք տուրքերից ազատել են տեկորցիներին: Ջալալյանցի հրատարակության մեջ արձանագրության բազմաթիվ բառեր աղավաղված են, տողերը շփոթած, և նրա բովանդակությունից գրեթե բան չի հասկացվում¹⁴:

Անհամեմատ լավ է կարդացել վենետիկցի Ներսես վ. Սարգսյանը, որի վերծանությունը, ինչպես նշեցինք, հետագայում հրատարակեց Մկրտիչ էմինո ուսերեն թարգմանությամբ: Սարգսյանի գրքում արձանագրությունն ազատ է ուշ ժամանակի հավելվածներից և շնայած այն բանին, որ տողերի շփոթու-

¹² Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխատությունների երկրորդ ժողովածու, Երևան, 1949, էջ 66:

¹³ Նույն տեղում, էջ 68:

¹⁴ Ս. Ջալալյանց, Ճանապարհորդություն..., մասն Բ, էջ 51—52:

որում փակագծերով վերականգնում ենք շերեացող գրերը և բազմակետերով ցույց ենք տալիս անվերծանելի և բացակայող մասերն առանց գրերի թիվը նկատի առնելու:

1. ...[ե]պիսկա[պո]սի եւ Տայրոնի՝ Տեկորոյ վանաց երիցու, եւ Մանանայ հազարապետի, Ուրանայ հոռոմի, որ շ...

2. Եւ հիմնարկեցաւ տեղիս ի ձեռն Յոհանու հայոց կաթաղիկոսութեան եւ Յոհանու Արշարունեաց...

3. յիւր բարեխաւսութիւն, եւ բոլոր ազգիս, եւ ամուսնի, եւ որդեկաց, եւ սիրելեաց, եւ...

4. Սահակ Կամսարական շինեաց զայս վկայարան սրբոյ Սարգսի¹⁸:

Այժմ անհնարին է հաստատապես ասել, թե երեացող գրերից վերև արձանագրությունը քանի տող է ունեցել, որովհետև պահպանված մասից վեր, տաճարի արևմտյան մուտքի կամարավոր մասում, հին քարերը չեն պահպանվել և մինչև 1008 թ. կատարված մի նորոգության զոհ են դարձել: Հավանաբար 1008 թ. էլ այդ քարերը փոխվել են նորերով, որպեսզի Բագրատունյաց արքայական հրովարտակը, որով տեկորցիները հարկային արտոնություններ էին ստանում, փորագրվի նոր հազցրած մաքուր քարերի վրա: Գուցե այդ է պատճառը, որ մուտքի ճակատին բացակայում է նաև կլոր շրջանակի մեջ առած հավասարաթև խաչը, որը սովորական էր V դարի հուշարձանների համար (Երերույք, Քասաղ և այլն):

Տեկորի կառուցման արձանագրությունը թվական չունի: Ինչպես հայտնի է, V դարում արձանագրությունների վրա թվական չէր գրվում, նույնիսկ Դվինի 553 թ. աշխարհաժողովից հետո էլ, երբ հաստատվեց հայոց տոմարը, երկար ժամանակ թվական չէր գրվում: Կարծում ենք, որ Տեկորի արձանագրության թվական չունենալու պատճառը պետք է որոնել նրա հնության մեջ: Այդ մասին Ալիշանը գրել է գեոևս 1881 թ.՝ «Թուականին պակասութիւն ևս վկայ է յառաջ քան զգիր Հայկականին լինելը»¹⁹: Սակայն նկատենք, որ թվական չունենալը միշտ է, որ հնության նշան կարող է լինել, որովհետև ուշ ժամանակի հայերեն արձանագրությունների մեծ մասն էլ անթվական է: Դեռ ավելին. նույնիսկ թվական ունեցող արձանագրությունների նկատմամբ էլ պետք է ունենալ քրննական մոտեցում, որովհետև նրանց մեջ պատահում են ուշ ժամանակների արտագրություններ:

Տեկորի այս հետաքրքիր, բայց թվական չունեցող արձանագրության ժամանակը կարող ենք որոշել միայն կողմնակի միջոցներով. ա) Տաճարի կառուցման ժամանակով, հենվելով ճարտարապետական առանձնահատկությունների վրա: բ) Արձանագրության մեջ հիշատակվող բառերի, դեպքերի և պատմության մեջ հայտնի անձնավորությունների միջոցով: գ) Արձանագրության գրերի զծագրական առանձնահատկությունների օգնությամբ:

¹⁸ Տեկորի տաճարը հետազայում կոչվել է ս. Երրորդության անունով: Թորամանյանը կարծում է, որ այդտեղ երկու եկեղեցիներ են եղել, մեկը՝ ս. Սարգսի, մյուսը՝ Երրորդության անունով: Հավանաբար Բագրատունյաց ժամանակ եկեղեցին նորոգելուց հետո օծել են և ս. Երրորդության անունով կոչել: Ն. Մառը Թորամանյանի այս կարծիքը չի ընդունում, որովհետև արձանագրության վրա պարզ գրած է զայս վկայաբան: Այդտեղ այս բառը ցույց է տալիս, որ խոսքը վերաբերում է այն հուշարձանին, որի վրա գրված է:

¹⁹ Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 133:

Մենք արդեն տեսանք, որ գիտնականների քննությունները ցույց են տալիս, որ Տեկորի տաճարը կառուցված կամ վերակառուցված է V դարում: Այդ մասին ոչ մի տարակուսանք կամ կասկած չի եղել և չկա: Մենք էլ մեր կողմից վերևում ցույց տվեցինք տաճարի այն առանձնահատուկ կողմերը, որոնք հատուկ էին միայն V դարին և քննության առարկա են եղել շատ ուսումնասիրողների համար:

Այդ հարցը համարենք լուծված և այժմ անցնենք արձանագրության քրնություններ:

Առաջին տողում հիշատակվող Տայրոն-ը Տեկորի առաջին վաներեցի անունն է, որ մասնակցել է տաճարի շինությանը: Ահադ. Ն. Մառն այդ անունը ուղղում է Տիրոն, որ նրա կարծիքով կարող է առաջադրվել լինել հայկական Տիրան կամ ընդհանուր եկեղեցական Տիրոն-ի²⁰:

Նույն տողում հիշատակվող Մանան հազարապետի անվան շուրջը տարբեր կարծիքներ են հայտնվել: Բանասեր Գալուստ Տեր-Մկրտչյանը դեռևս 1896 թ. ենթադրել է, որ այդ անունն արձանագրությունն ընդօրինակողները ճիշտ չեն կարդացել, հավանաբար այդտեղ հիշատակվել է պարսիկ Վեհնամը, որը Վահան Մամիկոնյանի 481 թ. ապստամբության ժամանակ Հայաստանում հազարապետ էր: Հ. Աճառյանը չի ընդունում Մանան անունը Վեհնամ-ի փոխելու առաջարկը, պատճառաբանելով, որ Մանան անունը հանդիպում է նաև այլ տեղերում: Մենք էլ մեր կողմից կարող ենք ավելացնել, որ արձանագրության էստամպի և լուսանկարների վրա այդ անունն առանց դժվարության կարդացվում է հորովված վիճակում Մանանայ հազարապետի:

Ն. Մառի կարծիքով հազարապետը եկեղեցու տնտեսն է և ոչ թե հայոց հազարապետը, որովհետև նրա անունը գրված է վաներեցից հետո:

Այդ տեսակետն անընդունելի է, որովհետև վանքի տնտեսը երբևք հազարապետ չի կոչվել:

Հազարապետի պաշտոնը մարզպանական Հայաստանում գործակալական կարևոր պաշտոններից մեկն էր: Հազարապետն էր սահմանում պետական հարկերն ու հսկում նրանց դանձմանը, նա էր իրականացնում նաև հասարակական հարկադիր աշխատանքները: Հայաստանն ուներ մի հազարապետություն, հետևիկական րստ էություն ճիշտ է Գալուստ Տեր-Մկրտչյանի այն ենթադրությունը, թե Ղազար Փարպեցու հիշատակած Վեհնամն ու Տեկորի արձանագրության Մանանը նույն անձնավորությունն են:

Սակայն, հավանական է, որ Վեհնամ հայոց հազարապետը ժողովրդին հայտնի է եղել Մանան մականունով և կամ պետք է ենթադրենք, որ ճիշտը Մանանն է, իսկ սխալը՝ Վեհնամը, որովհետև այդ անունը հիշատակված է միայն Ղազար Փարպեցու պատմության մեջ ընդամենը երկու անգամ, բայց երկու տարբեր ձևերով: Մի տեղում նա հազարապետին անվանում է Վեհ-վեհնամ, իսկ մյուս տեղում՝ միայն Վեհնամ: Գալուստ Տեր-Մկրտչյանը երկրորդ ձևն է համարում ուղիղը, իսկ Ղազար Փարպեցու պատմության գիտական հրատարակիչներն իբրև ուղիղ ձև ընդունել են Վեհվեհնամը²¹:

20 Н. М а р р, К датировке ктитурской надписи Текорского храма. «Христианский Восток», т. III, вып. I, 1914, Петроград, էջ 66-ի ծան.

21 Գալուստ Տեր-Մկրտչյան, Անանիա Շիրակացի, «Այրարատ» ամսագիր, 1896, № 4, ապրիլ, էջ 205—220: «Ղազարայ Փարպեցու Հայոց պատմություն և թուղթ առ Վահան Մամիկոնեան», Թիֆլիս, 1907, էջ 260—361:

Բուրբուրովին անժանոթ է մեղ առաջին տողում հիշատակվող Ուրան Հոռոմը, որ բստ երևույթին բյուզանդացի իշխան է եղել Հայաստանում:

Ն. Մաուր Ուրան Հոռոմին նույնացնում է Նիկիֆոր Ուրանի հետ, որը XI դարի սկզբին եկավ Հայաստան Դավիթ Կյուրապաղատի մահվանից հետո²², Բուրբուրովին անընդունելի է այդ կարծիքը, որովհետև ինչպե՞ս կարող է V դարի անձնավորությունների հետ իբրև տաճարի կառուցման մասնակից կամ ժամանակակից հիշատակվել XI դարի անձնավորություն:

Առաջին տողի վերջին շ-ն մի նոր բառի սկզբնաղիբն է, որի շարունակությունը ոչնչացել է: Առաջին տողը երկրորդի անմիջական շարունակությունը չի կազմում: Երկրորդ տողում իբրև Տեկորի հիմնադիր հիշատակվող Յոհան Կալոյիկոսը, ինչպես շատերն արդեն ասել են, Հովհան Մանդակունին է, որ դահակալել է 478—490 թթ.: Դա աներկբա է, որովհետև Մանդակունուց առաջ Հովհան կամ Հովհաննես անունով հայոց կաթողիկոս չի եղել, Մանդակունին Հովհաննես առաջինն է, իսկ Մանդակունուց հետո, երկրորդ Հովհաննեսը Օձնեցին է, որ կաթողիկոս է եղել շատ ուշ, 717—728 թթ.: Հասկանալի է, որ VIII դարի կաթողիկոսը չէր կարող V դարի կառուցվածքի հիմնադիր լինել²³:

Երկրորդ տողն էլ իր վերջավորությամբ չի կապվում երրորդի հետ: Այդ ավելի ակնառու է դառնում, երբ հաշվի ենք առնում, որ երկրորդ տողում հիշատակվում է Կամսարականների տան Հովհան Եպիսկոպոսը «Յոհանու Արշալունեաց (Եպիսկոպոսի)», իսկ երրորդ տողն սկսվում է բաբեմադրություններով, որոնք վերաբերում են կարծես թե կաթողիկոսի կամ Արշարունյաց Եպիսկոպոսի ամուսնուն, զավակներին, սիրելիներին և ամբողջ տոհմին: Հասկանալի է, որ Եպիսկոպոսը չէր կարող ունենալ ամուսին, հետևապես երկրորդ տողը ևս իր վերջավորությամբ չի կապվում երրորդի հետ:

Երրորդ տողում ամուսնի ձևը սեռական հոլովով, բարբառային է: Ն. Մաուն այդ համարում է ուշ ժամանակի արտահայտություն: Նա գրում է՝ «Իսկ ինչ վերաբերում է ամուսնի, հիմնարկեցաւ բառերին, ապա դրանք ուշ շրջանի վուլգարիզմի վկաներն են»²⁴: Երրորդ տողի վերջում ազատ տարածություն կա, որտեղ մաշված գրերի հետքեր են երևում, բայց չեն կարդացվում: Նախորդ վերձանողներն այդ չեն նկատել և երրորդ տողի նա գրերին անմիջապես միացրել են 4-րդը, որ սխալ է: Նշանակում է չորրորդ տողը ևս երրորդի շարունակությունը չէ:

Մեր կարծիքով ամենից հետաքրքիրը չորրորդ տողն է, որտեղ իբրև տաճարի կառուցող հանդես է գալիս Սահակ Կամսարականը: Վերջինիս Ղազար Փարպեցին հիշատակում է Վահան Մամիկոնյանի կողմից պարսիկ զորավար Նիխոր Վշնասպղատի մոտ ուղարկված պատգամավորների թվում: Ըստ Հ. Աճառյանի, Սահակ Կամսարականը շինել է ս. Մարգարի վկայարանը և վերաշինել Տեկորի եկեղեցին²⁵: Աճառյանն այստեղ իր տեղեկությունները երկու

²² H. M a p p, նշվ. աշխ., էջ 69:

²³ VI դարասկզբին Ավանում եղել է քաղկեդոնական Հովհան հակաթոռ կաթողիկոսը, որին բյուզանդացիք էին դրել: Նա ոչ մի առնչություն չունի Վալոց կաթողիկոսության հետ և պարզ է, որ այս արձանագրության մեջ հիշատակվող հայոց կաթողիկոսը նա չէր կարող լինել:

²⁴ H. M a p p, նշվ. աշխ., էջ 65:

²⁵ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Դ, Երևան, 1948, էջ 354:

տարբեր աղբյուրներից քաղելով թյուրիմացության մեջ է ընկել, որովհետև ս. Սարգսի վկայարանը նույն Տեկորի եկեղեցին է:

Ղազար Փարպեցու պատմությունից տեղեկանում ենք, որ Սահակ Կամսարականը Արշավիր Արշարունի Կամսարականի որդին էր: Վերջինս V դարի նշանավոր անձնավորություններից և գլխավոր նախարարներից մեկն էր և բազմիցս հիշատակված է Ղազար Փարպեցու, Նղիշեի և այլոց երկերում իբրև քաջ ռազմիկ և քաղաքական գործիչ:

Այսպիսով եզրակացնում ենք՝

ա. Տեկորի արձանագրության մեջ հիշատակված են երկու նշանավոր անձնավորություններ՝ Հովհան Մանդակունին և Սահակ Կամսարականը, որոնք ապրել և գործել են V դարի երկրորդ կեսին:

բ. Արձանագրությունն իր բովանդակությամբ համապատասխանում է տաճառի V դարում կառուցված լինելու վերաբերյալ գիտնականների եզրակացությանը:

Այս տեսակետն են արտահայտել Տեկորի արձանագրությամբ զբաղվող հայագետներից շատերը (Ալիշան, Գալուստ Տեր-Մկրտչյան, Ն. Ս. Կոզյան և ուրիշներ): Այդ մասին Գալուստ Տեր-Մկրտչյանը գրել է՝ «Հազիվ 70 տարով ուշ է այս արձանագրությունը մեր այբուբենի սկզբնավորությունից»²⁶:

Այդ բոլորին հակառակ, Կարապետ Կոստանյանցն իր «Վիմական տարեգիրի» մեջ, առանց որևէ բացատրության, Տեկորի այս արձանագրությունը դրել է VI դարի արձանագրությունների մեջ: Այդ նույն գրքի խմբագիր Ն. Մառն իր գրած առաջաբանում այդ արձանագրությունը համարում է ուշ ժամանակների արտագրություն, որը ոչ թե VI, այլ VII դարին չի կարող պատկանել լեզվի ոճական սովորներով²⁷:

Վերահիշյալ գրքի առաջաբանում Ն. Մառն գրում է, թե Տեկորի արձանագրության մեջ եղած ռիսնաբեցալ բառի վերջավորությունը, իբրև ժողովրդական արտահայտության ձև, չի կարող VI դարում գրված լինել: Նա թեև իրավացիորեն նշել է, որ Յոհան կաթողիկոսը VI դարի Յոհան հակաթոռ չի կարող լինել, բայց այդ հարցը խնդրի առարկա չի դարձրել և Կոստանյանցի սխալը չի ուղղել, որովհետև ինքն էլ այն կարծիքին է եղել, թե արձանագրությունը ուշ ժամանակի է և ոչ V դարի²⁸:

Պետք է նկատել, որ Կոստանյանցի «Վիմական տարեգիրն» ընդհանրապես սխալաշատ է և ծայր աստիճան անփութորեն է կազմած: Երբեմն միևնույն արձանագրությունը տարբեր թվականներով մեջ է բերված երկու և նույնիսկ երեք անգամ: Շփոթված են արձանագրությունների տեղերը, աղավաղված է նրանց բովանդակությունը²⁹:

Ն. Մառն Տեկորի արձանագրությամբ զբաղվել է մասնագիտորեն, այն էլ ոչ թե մի անգամ, այլ մի քանի տարբեր առիթներով, բայց հետաքրքրն

26 Գալուստ Տեր-Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 206:

27 «Վիմական տարեգիր, ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց», կազմեաց Կ. Կոստանյանց, ՍՊԲ, 1913, էջ 9:

28 H. M a p p, նշվ. աշխ., էջ 63-ի 3-րդ ծան.

29 «Վիմական տարեգիր» քննադատությունը տե՛ս Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 71: Ն. Մառն իր գրած առաջաբանում ևս խիստ քննադատության է ենթարկել այդ գիրքը:

այն է, որ ամեն անգամ մի նոր, նախորդից տարբեր կարծիք է հայտնել այդ արձանագրության ինչպես ժամանակի, այնպես էլ բովանդակության մասին: Դեռևս 1909 թ. Երեբունյքի բազիլիկ տաճարի ուսումնասիրությանը նվիրված իր աշխատության մեջ նա գրել է, որ Տեկորի տաճարի արձանագրությունն իր բովանդակությամբ իսկական է և կասկածից դուրս է, որ պատկանում է V դարի վերջին և VI-ի սկզբին և որ այդ արձանագրությունը հենակետ է հանդիսանում Տեկորի և նրան ազգակից Երեբունյքի կառուցման ժամանակը որոշելուն:

Մի այլ աշխատության մեջ, Ն. Մառը, հենվելով պրոֆ. Ն. Ադոնցի ուսումնասիրության վրա, իրավացիորեն նշում է, որ Տեկորի արձանագրության մեջ հիշատակվող Սահակ Կամսարականը 505 թ. մասնակցել է Բաբկեն կաթողիկոսի Դվինում հրավիրած աշխարհաժողովին և հայ նախարարների ցանկում նրա անունը գրված է երկրորդ տեղում (Վարդ Մամիկոնյանի անունից հետո) «Սահակ Կամսարական Արշարունեաց տէր» գրությամբ³⁰: Բացի այդ, նա գրում է, որ ճիշտ է Ալիշանի ենթադրությունն այն մասին, թե Տեկորի արձանագրության մեջ հիշատակվող Հովհան կաթողիկոսը Մանգակունին է և ավելացնում, որ նա կաթողիկոս է եղել V դարի վերջերին, զուցե և մինչև VI դարի սկզբները³¹: Սակայն Ն. Մառն այդ հոգովածում արձանագրությունը սկզբը նազիր չի համարում, այլ կարծում է, որ տաճարի վերակառուցման ժամանակ արտագրված է մի ուրիշ տեղից կամ որևէ փաստաթղթից³²:

Հետագայում, ինչպես տեսանք, Կոստանյանցի «Վիմական տարեգրի» առաջաբանում այն կարծիքն է հայտնում, որ արձանագրությունը ոչ թե VI դարի, այլ նույնիսկ VII դարի չի կարող լինել, իսկ մի տարի անց, 1914 թ., մեջ է բերում իր 1909 թվականի կարծիքը Տեկորի արձանագրության իսկության մասին և փակագծերի մեջ ավելացնում. «Այժմ, զգուշության համար, ես կդերագասեի ասել. «հավանաբար իսկական է»:

Դրանով նա աշխատել է մեղմացնել իր կարծիքի շեշտակի փոփոխությունը, որովհետև այդ նույն հոգովածի վերջում քննելով արձանագրության բովանդակությունը, գալիս է այն եզրակացության, որ նա ոչ թե պատճենն է հին արձանագրության, ինչպես ենթադրել էր 1909 թ. և նույնը կրկնել որոշ զգուշացումով հոգովածի սկզբին, այլ գրվել է 1008 և 1014 թթ. հետո: նույնիսկ կարծիք է հայտնում, որ արձանագրության մեջ հիշատակվող Ուրան Հոռոմր XI դարի անձնավորություն է³³:

Ինչպես կարող է 1014 թ. հետո գրված արձանագրությունը հիմք հանդիսանալ V դարի տաճարների կառուցման թվականը որոշելուն կամ ինչպես կարող էին XI դարում գրել V դարի եկեղեցու կառուցման մասին: Ում էր պետք այդ կեղծիքը: Ինչու էին Բագրատունի Կառաբանիդե թագուհին և Աշոտ թագավորը շահագրգռված V դարի Կամսարականների դոմբն անելու և իրենց կատարած գործերը վերագրելու նրանց և կամ հակառակը: Ն. Մառի արտահայտած մեկը մյուսին հակասող կարծիքները Տեկորի տաճարի կառուցման արձանագրության ժամանակի վերաբերյալ բացատրվում են երկու հանգամանքով: Նախ՝ այն հիվանդագին երևույթով, որ XIX դարի վերջերին և XX դա-

30 H. M a p p, նշվ. աշխ., էջ 60, ծան. 3:

31 նույն տեղում, էջ 63, ծան. 2:

32 նույն տեղում, էջ 59:

33 նույն տեղում. էջ 67:

րի առաջին երկու-երեք տասնամյակներին ամեն մի ուսումնասիրող, որևէ անկատար կամ անհիմն չափանիշ ունենալով իր ձեռքին, տակնուվրա էր անում մեր ողջ պատմությունը: Այդ եղանակով էր, որ մեր պատմահայր Մովսես Խո-րենացուն պոկեցին իր ժամանակից և հասցրեցին մինչև IX դարը: Երկրորդ այն պատճառով, որ ներկա դարի տասական թվականներին հայկական հնա-գրությունը քիչ էր ուսումնասիրված և գրերի ձևի փոփոխությունները պարզ-ված չէին: Այդ խնդիրն այժմ էլ շուծված չի կարելի համարել, որովհետև հայոց գրերի մասին եղած աշխատությունները կամ զուտ պատմական բնույթ ունեն և կամ հիմնված են ձևագրերի ուսումնասիրության վրա: Վիժակա՛ն արձանա-գրությունների գրերի կրած ձևափոխությունները բոլորովին տարբեր են եղել ձևագրական գրերի փոփոխություններից: Այս հանգամանքը հաշվի չի առնված հնագրական ուսումնասիրություններում:

Տեկոթի արձանագրությանը նվիրված հոդվածում լ. Մառը նշում է, որ հայկական հնագրությունը խիստ անմշակ վիճակում է գտնվում: Նա գրում է. «Ես չեմ խոսում արդեն... հայ հնագրության մշակման շատ ցածր մակարդա-կի մասին» և այդ պատճառով էլ նա իր հոդվածում բոլորովին չի դիմում գրերի ձևերի օգնության: Դեռ ավելին, նա բոլորովին հաշվի չի առել այն սարքերու-թյունը, որ գոյություն ունի Կատրանիդեի 1008 թվականի և Տեկոթի շինության արձանագրությունների գրերի ձևերի միջև և վերջինը համարել է 1008-ից հետո գրված նախորդի շարունակությունը: Ն. Մառի վերոհիշյալ հոդվածը վիճաբա-նական բնույթ ունի և գրված է Գարեգին Հովսեփյանի «Քառուկ հայ հնագրու-թյան» աշխատության դեմ, որտեղ, առարկելով Ն. Մառին, Գ. Հովսեփյանը Տեկոթի արձանագրության մասին գրել է՝ «Գրերի ձևին նայելով, պետք է, ոչ ուշ քան է դարը համարել»³⁴, Հովսեփյանը գրերի ձևերի հիման վրա այն ժա-մանակ ավելին չէր կարող ասել, որովհետև VII դարից ավելի հին արձանա-գրության ոչ մի բեկոր հայտնի չէր, որպեսզի նրանց հետ համեմատելու: Գրը-վածքի բնույթից երևում է, որ նա տրամադիր է արձանագրությունը V դարի սկզբնագիր համարելու, բայց զգուշության համար լուսանկարի տակ հարցա-կան նշանով գրել է Զ—է դար³⁵:

Ն. Մառն իր հոդվածում՝ Տեկոթի արձանագրությունը քննարկել է բառ առ բառ, բովանդակության միջոցով նրա հնությունը պարզելու համար, բայց ցավն այն է, որ նա իր քննությունը սխալ ուղղությամբ է տարել: Նա գրաբարը բաժանելով երկու շրջանի՝ հին դասական կամ հայյա՛ն լեզու (հայկский язык), և ոչ դասական կամ հայկական լեզու (армянский язык)³⁶, գտնում է, որ վերջինս հանգես է գալիս VIII դարից հետո, և դասական հայերենը մինչ այդ ոչ մի խոտորում չի ունեցել: Նրա կարծիքով, մինչև Բագրատունյաց թագավո-րության շրջանը Հայաստանում բարբառային արտահայտության ձևեր չէին կարող գոյություն ունենալ և դասական լեզվի համեմատությամբ ամեն մի տարբերություն նա համարում է ուշ ժամանակների արտահայտություն կամ անգրագիտություն, կարծես թե V դարի մարդիկ չէին կարող գրագիտությունից փոքր-ինչ ազդատիմաց լինել:

Տեկոթի արձանագրության ուշ ժամանակի պատկանելը ցույց տալու հա-մար իբրև ապացույց Ն. Մառը մեջ է բերում հետևյալ բառերը՝

34 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 5:

35 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., տախտակ Բ:

36 «Վիժակա՛ն տարեգիր», խմբագրի առաջաբան, էջ 19:

ա) Հիմնադրվեցաւ, որ նրա ասելով դասական հայերենում չկար³⁷;

բ) Յոհաննու հայոց կաթողիկոսութեան դարձվածքը անգրագիտության արդյունք է համարում, այն էլ կաթողիկոսության բառի ո-ի փոխարեն ա գրով: Նրա կարծիքով V դարում կարող էր գրվել միայն Յոհաննու հայոց կաթողիկոսի և ոչ թե կաթողիկոսութեան: գ) Եպիսկոպոս բառն արձանագրության սկզբում գրված է (ե)պիսկապոս, ո-ի փոխարեն ա, որը դարձյալ անգրագիտության արդյունք է համարում: դ) Ուշ ժամանակի բարբառային արտահայտության արդյունք է համարում նաև ամուսնի բառը:

Կարծում ենք ն. Մառն այս հարցում սխալվում է: Նա հաշվի չի առնում, որ ընդհանրապես վիմական արձանագրությունների լեզուն զգալի կերպով տարբերվում է գրաբարից, և արձանագրությունների մեջ մեծ տեղ են բռնում ժամանակի ժողովրդական արտահայտության ձևերը: Ո գրի փոխարեն ա-ի գործածությունը, մեր կարծիքով, անգրագիտության հետ չի կապվում, մասնավոր երբ հաշվի ենք առնում, որ երկու անգամ է հանդես գալիս, կաթիկոս և եպիսկապոս կրոնական փոխառյալ բառերի մեջ: Այդ «սխալը» բառերի տեղական արտասանության ձևերի գործածության օրինակ է հնագույն վիմական արձանագրության մեջ, մի բան, որ հետագայում դառնում է արձանագրությունների լեզվի գլխավոր առանձնահատկություններից մեկը:

Ն. Մառի կանխակալ կարծիքով V կամ VI դարի հայերեն վիմական արձանագրություններ բոլորովին չկան, իսկ VII դարինը կասկածի տակ է դնում: Նա «Վիմական տարեգրի» առաջաբանում գրում է. «Կարող է պատահել, որ հայերեն արձանագրությունների բնագրերի վրա կատարվող իսկական քրնական աշխատանքը ժամանակին հաստատի, որ մեր տրամադրության տակ չկան նաև իսկականից VII դարում փորագրված արձանագրություններ»:

Ավելի խորանալով իր ժխտողական ենթադրությունների մեջ, նա վերջում հանդում է այն եզրակացության, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունն էլ, որ հայագետներն ընդունում են իբրև V դարի գործ, հազիվ թե VIII դարից հին լինի, եթե նույնիսկ հաշվի չառնենք նրա մեջ պատարված ավելի ուշ ժամանակների ուղղումները³⁸:

Ն. Մառի այդ կարծիքն այսօր հերքվում է բազմաթիվ տվյալներով: Գիտությանն արդեն հայտնի են VII դարի մի քանի տասնյակ արձանագրություններ, որոնցից մի քանիսը Հովսեփ Օրբելին է հրատարակել «Християнский Восток» գիտական պարբերականում դեռևս ներկա դարի 10-ական թվականներին³⁹, ինք նմուշ էլ հայտնաբերվեց Դվինի պեղումներից՝ կաթողիկե եկեղեցու ծածկի կղմինդրի վրա գրված⁴⁰: 1945 թ. հայտնի դարձավ Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, գրված 633 թ.⁴¹: Դվինում գտնվեցին VI դարի վիմագիր երկու տապանաքարեր, որոնք կապված էին կաթողիկե եկե-

37 Հիմնադրվեցաւ բառի պատճառով Արուճի VII դարի արձանագրությունը ևս Ն. Մառն ուշ ժամանակների է վերագրում: Նա դասական է համարում ճիմն արկեալ, ճիմն արկանել ձևերը, բայց չեզոք ձևը դասականում ինչպե՞ս էր լինելու:

38 «Վիմական տարեգիր...», խմբագրի առաջաբանը, էջ 19:

39 Н. Орбели, Шесть армянских надписей VII—X вв., т. III, в. I, Петроград, 1914, էջ 72—91:

40 Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 246—250:

41 Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945:

ղեցու 607 թ. առաջ քանդված հին շենքի հետ⁴²։ Այնպես որ, այսօր հայադիտության համար VII դարի վիմական արձանագրությունները կասկածի ոչ մի տեղիք չեն տալիս և թվով բավական շատ են։

Այս բոլորով հանդերձ, Տեկորի տաճարի շինության արձանագրության իսկության մասին եղել են նաև այլ կարգի կասկածներ։

Թորոս Թորամանյանը Տեկորի տաճարի ճարտարապետության նվիրված իր գրքում նշում է, որ արձանագրությունը գրված է քանդակներից ազատ մնացած տարածությունների վրա, հետևապես շինության ժամանակ կառուցողներն այդ արձանագրությունը հաշվի չեն առել, այդ պատճառով էլ արձանագրության տողերը երկար ու կարճ են և գրերը տարբեր տողերում տարբեր մեծությամբ ունենում։ Այդ ամենը Թորամանյանը բացատրում է նրանով, որ արձանագրությունը գրված է տաճարի շինությունից հետո, առանց նշելու, թե երբ։ Արձանագրության բովանդակությունը ուշադիր քննելիս, նկատում ենք, որ 4-րդ տողն իր լակոնիկ բովանդակությամբ արձանագրության սկիզբն է և կարծես թե նույն տողում էլ վերջանում է։

«Սահակ Կամսարական շինեաց զայս վկայարան սրբոյ Սարգսի»։

Արձանագրության տեղը փոքր է եղել, բոլոր բառերը չեն տեղավորվել, այդ պատճառով վկայարան բառը փոքր գրերով են փորագրել և նրա զիսին տեղավորել սրբոյ Սարգսի երկու բառերը։ Նրկու տարբեր արձանագրությունների գոյությունն ավելի ակնառու է դառնում, երբ նկատի ենք առնում այն, որ նրանց մեջ երկու անգամ է նշվում տաճարի շինության մասին։ 4-րդ տողում ասվում է, որ Սահակ Կամսարականն է շինել այդ վկայարանը, իսկ երկրորդ տողում, դրան հակառակ, նշվում է, որ (սրբա)տեղին հիմնարկվել է ի ձեռն Յոհանու հայոց կաթողիկոսութեան։

Վերին երեք տողերի արձանագրության մեջ բոլոր անձնավորությունները հիշատակվում են իրենց տիտղոսներով։

Տալուն՝ Տեկորոյ վանաց երեց,

Մանանայ հաղարապետ,

Ուրանայ Հոռոմ,

Յոհան հայոց կաթողիկոս և

Յոհան՝ Արշարունեաց...⁴³, իսկ զիսավոր անձնավորությունը, ում դրամական միջոցներով կառուցվել է եկեղեցին, ոչ մի տիտղոս չունի, բացի պարզ տոհմանունից՝ Սահակ Կամսարական։

Ն. Մառն էլ է ուշադրություն դարձրել արձանագրության մեջ շինության մասին երկու անգամ հիշատակության վրա, ինչպես նաև բարեմաղթությունների նպակի դեմքի վրա, երբ հիշատակված են կաթողիկոսն ու Արշարունյաց հոգևոր հովիվը։ Այդ բոլորը քննելով նա եկել է այն ճիշտ եզրակացության, որ արձանագրությունը պետք է կարդալ նախ՝ 4-րդ տողը, այնուհետև 3-րդը,

⁴² Կ. Ղաֆաղարյան, Գլխի քաղաքը և նրա պեղումները, էջ 244—246։

⁴³ Բ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխատությունների ժողովածու, 1942, էջ 218։ Թորամանյանը հետագայում իր կարծիքը փոխեց և բնդունեց արձանագրության V դարին պատկանելի։ 1930 թ. այդ մասին նա գրեց՝ «Շինության որոշ թվական չկա շենքի վրա, միայն շինող Սահակ Կամսարականի և բնդմին հիշատակված անունները, հ. Ալիշանի քննությամբ V դարուն կհասնին։ Բացի արձանագրության մեջ հիշված V դարու անուններեն, ճարտարապետական և շինարարական ոճերի քննությունը ևս այս շենքը տանում է մինչև V դար» (նույն տեղում, 2-րդ ժողովածու, էջ 66)։

որից հետո 2-րդը և վերջում էլ 1-ինը, այսինքն տող առ տող ներքևից վերև: Այդ առաջարկը նա արել է նաև այն ճիշտ դիտողության հիման վրա, որ տաճարը կառուցող մեծ իշխան Սահակ Կամսարականը չէր կարող արձանագրության մեջ վերջում միայն հիշվել, իսկ 3-րդ տողի բարեմաղթությունները, եզակի դեմքով, կարող են վերաբերվել միայն Սահակ Կամսարականին:

Արձանագրության տողերը ինչ կերպ էլ դասավորելու լինենք, շինության մասին երկու անգամ հիշատակությունը մի անգամ չի դառնա և միայն տողերի վերադասավորությամբ խնդիրը չի լուծվի: Նշանակում է, ճիշտ է մեր եզրակացությունն այն մասին, որ այդտեղ ոչ թե մեկ, այլ երկու տարբեր արձանագրություններ կան, որոնցից առաջինը 4-րդ տողն է, Սահակ Կամսարականի արձանագրությունը, իսկ երկրորդը՝ առաջին երեք տողերը, որ գրված են հայոց կաթողիկոսի, հաջարապետի, Արշարունյաց տան հոգևոր հովիվի և Տեկորի վաներեցի անունից⁴¹:

Հասկանալի է, որ Սահակ Կամսարականի արձանագրությունը գրվել է եկեղեցու շինության ավարտից անմիջապես հետո, 480-ական թվականներին, իսկ երկրորդը, որի մեջ հիշվում է Հովհան Մանդակունին, գրված պետք է լինի նախորդից ամենաուշը մեկ-երկու տարի հետո, բայց ոչ ուշ քան 490 թվականը, երբ վախճանվեց Մանդակունին:

Արդ, հարց է առաջ գալիս, թե ինչու երկու արձանագրություն է գրվել Տեկորի տաճարի շինության վերաբերյալ: Կարծում ենք, դրա պատասխանը հետևյալն է.

Տաճարը կառուցվել է Սահակ Կամսարականի միջոցներով և նրա նախաձեռնությամբ, ուստի կառուցումից անմիջապես հետո, գրվել է նրա վերաբերյալ մի տողանի արձանագրություն բաղկացած 7 բառից: Տաճարի կառուցումից հետո, երբ Սահակ Կամսարականի շինարարական արձանագրությունն արդեն փորագրված էր, վանքի առաջնորդը կամ Արշարունյաց եպիսկոպոսը, Սահակ Կամսարականի համաձայնությամբ, նոր արձանագրություն է կազմել հիշատակելու համար նաև այն անձերին, որոնք գործոն մասնակցություն են ունեցել տաճարի շինությանը և այդ արձանագրությունը փորագրել են Սահակ Կամսարականի արձանագրության գլխին, նույն քարի վրա, ամեն կերպ աշխատելով բովանդակությամբ կապել նրա հետ իբրև նրա շարունակությունը: Բայց, քանի որ Սահակ Կամսարականի արձանագրությունն արդեն գրված էր մուտքի ճակատակալ քարի ստորին եզրին և նրանից ներքև այլևս տեղ չկար նոր կազմածը գրելու համար, ստիպված են եղել արձանագրությունը շարունակել դեպի վեր և այդպիսով նախ գրել են երրորդ, այնուհետև երկրորդ և վերջում էլ՝ առաջին տողը: Ինչպես վերևում նշեցինք, Ն. Մառն էլ, արձանագրության բովանդակությունից ելնելով, հանգել է այն ճիշտ եզրակացության, որ պետք է կարդալ ներքևից վերև, տող առ տող: Այդպիսով, արձանագրությունը կարդացվելու է այսպես՝

4. Սահակ Կամսարական շինեաց զայս վկայարան սրբոյ Սարգսի

⁴¹ Պրոֆ. Ն. Մառը գարմանում է, որ Տեկորի շինարարական արձանագրությունը մի տողանի չէ, ինչպես մի շարք տեղերում (Կարմրավոր, Եղվարդ և այլն), թեև դա պարտադիր չէ, որովհետև Հովհաննիսյանը և շատ այլ տեղերում VII դարի կառուցողական արձանագրությունները մի տողանի չեն: Այնուամենայնիվ, Տեկորում կառուցողական բուն արձանագրությունը իր նախնական վիճակի մեջ, ինչպես տեսնում ենք, միայն մի տող է ունեցել:

3. յիւր բարեխաւսութիւն, եւ բոլոր ազգիս, եւ ամուսնի, եւ որդեկաց, եւ սիրելեաց (եւ)

2. եւ հիմնարկեցաւ տեղիս ի ձեռն Յոհանու հայոց կաթաղիկոսութեան, եւ Յոհանու Արշարունեաց

1. (ե)պիսկապոսի, եւ Տայրոնի՝ Տեկորոյ վանաց երիցու, եւ Մանանայ հազարապետի, Ուրանայ Հռոմի, որ շ...

Երրորդ տողում ազգիս, բոլոր վերձանողները կարդացել են ազգիւն:

Երրորդ տողի վերջում և 2-րդի սկզբին եւ շաղկապը կրկնվում է:

Առաջին տողի սկզբի 5 գիրը չի երևում, կարող է այդ գիրը գրված լինել 2-րդ տողի վերջում, որպէս եպիսկոպոսի բառի առաջին գիրը:

Երկու արձանագրութիւնների փորագրողը միևնույն մարդն է: Այդ երևում է նրանից, որ երկուսն էլ բացարձակապէս միևնույն գրերն ունեն, շնայած այն բանին, որ Սահակ Կամսարականի արձանագրութիւնն աւելի խոշոր գրերով է քանդակված:

Ակադ. Ն. Մառի այն ենթադրութիւնը, թէ Տեկորի արձանագրութիւնը սկզբնագիր չէ, այլ արտագրված է հետագայում, ոչ մի բանով չի պատճառաբանվում, որովհետեւ հնում արտագրում էին միայն այն դեպքում, երբ արձանագրութիւնը փակվում էր տաճարին կից շինված որևէ նոր կառուցվածքով: Տեկորի տաճարին կից որևէ հավելյալ շինվածք չկա, հետևապէս արձանագրութիւնն արտագրելու դրդապատճառ չի եղել:

Տաճարի շինութեան արձանագրութիւնների սկզբնագիր լինելը և V դարին պատկանելը հաստատվում է նաև գրերի գծագրական առանձնահատկութիւններով: Հայկական գրի սկզբնական տեսակներին նվիրված մեր աշխատութեան մեջ բազմաթիվ փաստերի հիման վրա եկել ենք այն եզրակացութեան, որ վիմական արձանագրութիւնների գրերը հնագույն շրջանում լայն են ու մեծ, ելուստներն ուղիղ և երկար, միացած գրեր և պատվով կրճատումներ չկան: Ժամանակի ընթացքում գրերը հետզհետեւ նեղանում են, ելուստները կարճանում և ճկվում են ներքև, շատանում է միացյալ գրերի և կրճատված բառերի թիվը:

Այդ նշանակում է, որ վիմական արձանագրութիւնների գրերի ձևափոխութիւնները կապված են եղել տեղի և աշխատանքի խնայողութեան հետ, որն առաջ է եկել փոքրիկ քարի վրա շատ բան գրելու ձգտումից: Այդ պատճառով էլ արձանագրութիւնների ժամանակը որոշելիս հաշվի ենք առնում նաև գրերի ձևերը, նրանց գծագրական առանձնահատկութիւնները, լայն կամ սեղմ լինելը, համառոտագրված ու կրճատված բառեր ունենալը և այլն: Շուրջ 1000-ի հասնող արձանագրութիւնների հիման վրա կազմել ենք գրերի ձևափոխումների տախտակ և համառոտագրութիւնների ցուցակներ, որոնք շատ են օգնում անձանոթ արձանագրութիւնների ժամասակր որոշելուն⁴⁵: Այդ ցուցակներից երևում է, որ հնագույնները գրված են պարզ ու լրիվ բառերով, և գրերը միմյանցից անջատ են, իսկ ուշ ժամանակներին բարդ են՝ բազմաթիվ կրճատումներով և միացումներով խճողված:

Այս տեսակետով Տեկորի տաճարի արձանագրութիւնը հայոց բոլոր արձանագրութիւնների մեջ միակն է, որ կրճատված և համառոտագրված ոչ մի բառ չունի: Նույնիսկ Դվինի VI դարի տապանագրերը և Հոփսիմեի վանքի

45 Կ. Ղաֆազարյան, Հայկական գրի սկզբնական տեսակները, էջ 75—87:

618 թ. զույգ արձանագրություններն ունեն միացյալ գրեր և համառոտագրած բառեր: Գրերի ձևերով էլ Տեկոթի արձանագրությունն ամենահինն է մինչև այժմ հայտնի բոլոր արձանագրությունների մեջ:

Երկաթագիր Ա-ի ձևափոխումները զարերի ընթացքում ունեցել են հետևյալ պատկերը՝

5-րդ դ.	7-րդ դ.	10-րդ դ.	13-րդ դ.	15-րդ դ.	17-րդ դ.
Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա

Հայերենում ամենաշատ դործածական գիրը Ա-ն է, բառասկզբում Ա-ն դործածվում է 16 տոկոսից ավելի, իսկ բառամիջին՝ մոտ 14—15 տոկոս: Վիճական արձանագրությունների մեջ Ա գիրն ամենից շատ է ձևափոխման ենթարկվել և միայն նրանով կարելի է ճշտության որոշ սահմաններում արձանագրության ժամանակը որոշել: Երկաթագրի Ա-ն երկստեղն է, աջակողմյան ստորին հուստով: Գիտենք, որ ամենահին ժամանակներում (VII դարում) նա իր երկու ստեղների մեջ ուներ վերևի չորս ձև՝ աջ կողմի ստեղնին միացած, իսկ Տեկոթի տաճարի արձանագրության մեջ այդ գիծը ոչ թե երկու ստեղների մեջ է գտնվում, այլ կազմում է աջակողմյան երրորդ ստեղնը՝ իր ստորին մասի աջ թեքված ելուստով: Սա բուն մեսրոպյան Ա գիրն է, որ առայժմ մեզ ծանոթ է միայն Տեկոթի արձանագրությունից⁴⁶:

Ներկայացնում ենք նաև Տեկոթի արձանագրության գրերի հիման վրա կազմած հայկական այբուբենի V դարի տառաձևերը: Տեկոթի արձանագրության մեջ բացակայող է, ր, ժ, ծ, ց, փ և ք գրերի ձևերը վերցրել ենք մեզ ծանոթ VI և VII դարերի արձանագրություններից:

Այս բոլորից եզրակացնում ենք՝ ա) Տեկոթի շինության արձանագրությունը սկզբնագիր է և ոչ թե ուշ ժամանակների կեղծիք: բ) Գրված է 480-ական թվականներին: գ) Սկզբում գրված է եղել 4-րդ տողն իբրև առանձին արձանագրություն, բայց մեկ-երկու տարի անց փորագրել են նաև առաջին երեք

Ա	Ժ	Ճ	Դ
Բ	Ի	Մ	Ս
Գ	Լ	Յ	Ա
Դ	Ե	Ն	Շ
Ե	Ծ	Շ	Ր
Զ	Կ	Ո	Յ
Է	Կ	Չ	Ի
Ը	Չ	Պ	Փ
Թ	Ղ	Ղ	Բ

46 Գ. Հովսեփյանն իր «Քարտեզ հայ հնագրության» 5-րդ էջում գրում է, որ այդ ձևի ա-ով մի քար նա տեսել է Քալինի գերեզմանոցում:

տողերը՝ աշխատելով բովանդակությամբ կապել նախորդի հետ: դ) Արձանագրությունը պետք է կարդալ ստորին 4-րդ տողից դեպի վերև տող առ տող, ինչպես առաջարկել է ահադ. ն. Մսուր: և) Տեկորի շինության արձանագրությունն առաջմ ձիակն է հայերեն մոտ 10000 արձանագրությունների մեջ, որ փորագրված է V դարում, հայկական գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի մահվանից ընդամենը 45—50 տարի հետո:

НАДПИСЬ ТЕКОРСКОГО ХРАМА V ВЕКА И АРМЯНСКИЙ АЛФАВИТ С МЕСРОПОВСКИМ ПИСЬМОМ

Проф. К. Г. КАФАДАРЯН

(Р е з ю м е)

Исследования многих ученых показали, что древнейший Текорский храм, который без заметных изменений дошел до наших дней, построен в V веке.

Надпись о постройке храма высечена на орнаментированном наличнике его западного входа. В ней упомянуты имена строителя храма Саака Камсаракана и его современников — каталикоса Иоанна, епископа княжеского дома Камсараканов Иоанна, азарпета (начальника подачей и общественных работ Армении) Манана и др.

Некоторые из упомянутых в надписи личностей известны и из других письменных источников как деятели второй половины V века. Так, Саак Камсаракан, по свидетельству историка V века Лазаря Парпского, являлся активным участником восстания князя Вагана Мамиконяна (470—480 гг.) против персидских завоевателей, а Иоанн Мандакунни был каталикосом армян в 478—490 годах.

Акад. Н. Я. Марр в своих трудах, подтверждая подлинность надписи по содержанию, считал ее поздней копией. К сожалению, Н. Я. Марр не обратил внимания на палеографические особенности надписи.

На основании проведенных исследований можно прийти к следующим выводам:

1) надпись о постройке Текорского храма V века подлинна, а не подделка и не поздняя копия;

2) она составлена в 478—490 годах, т. е. спустя 45—50 лет после смерти великого изобретателя армянской письменности Месропа Маштоца;

3) Текорская надпись о постройке храма — самая древняя из всех известных нам армянских надписей, число которых превышает десять тысяч.

На основании Текорской надписи мы составили алфавит армянского инициального письма еркатагир (по первоначальным начертаниям V века). Очертания же отсутствующих в надписи букв լ, ր, ժ, ծ, փ, չ, ջ, փ и ց нами взяты из других надписей VI и VII вв.